

ՉԱՐԼԶ ԴԻԿԵՆԶԻ ԾՆՆԴԵԱՆ ԱՐՁԱԿ ԵՐԳԵՐԻՑ

Թարգմանեց բնագրից Մխիթար Տէր-Անդրէասեանց

ՅՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դլուխ Ա. Մառլէյի Ուրուականը.
Դլուխ Բ. Երեք Ոգիներից Առաջինը.
Դլուխ Գ. Երեք Ոգիներից Երկրորդը.
Դլուխ Դ. Երեք Ոգիներից Վերջինը.
Դլուխ Ե. Վերջաբան.

Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Այս Ոգևորված գրքոյկում աշխատել եմ յարուցանել մի Գաղափարի Ողի,
որ աշ ընթերցողներիս քէֆը կը փշացնի, աշ նրանց տօնական տրամադրութիւ-
նը կը խանգարի, ոչ էլ կը վըզովի նրանց ինձ դէմ կամ որևէ մէկի դէմ։ Ե-
րանի հաճելի լինի նրա այցը ամենքին և ոչոք չհալածի նրան։

Գլուխ Ա.

ՄԱՌԵՔԻՑԻ ՈՒՐՈՒՍԿԱՆԸ

Սկսենք նրանից, որ Մառլէյը մեռած էր: Այդ անկասկած է: Նրա թաղման արձանագրութիւնը ստորագրել էին քահանան, թաղապետը, կապալառուն *) և գլխաւոր սպուռը: Ինքը Սկսուջն էր ստորագրել: Նրա անունը գին էր տալիս բորսայում ամենմի թղթի, որի վրայ նա դրած էր լինում իր ձեռքը: Եւ այդպէս ուրեմն ծեր Մառլէյը մեռած էր:

Գիտէր արդեօք Սկսուջը, որ նա մեռած է: Անկասկած գլխէր: Ի՞նչպէս կարող էր չգիտենալ: Չգիտեմ՝ քանի՛ քանի տարուայ ընկերներ էին Սկսուջն ու նա: Սկսուջն էր նրա միակ կտակակատարը, նրա միակ կառավարիչը, միակ յաջորդը, միակ կենդանի մնացած ժառանգը, միակ բարեկամը և միակ սըգուորը: Սակայն հէնց Սկսուջն էլ այնքան սարսափահար չէր եղել տխուր դէպքից, որ չկարողանար հէնց թաղման օրը սքանչելի գործեր անել. և իսկապէս նա այդ օրը յաւերժացրեց մի անպայման շահաւէտ գործով:

Մառլէյի թաղման յիշատակութիւնը յետ է տանում ինձ կրկին պատմութեանս սկիզբը: Կամկած չկայ որ Մառլէյը մեռած էր: Այդ պէտք է լաւ ըմբռնել, այլապէս զարմանալու բան չէք գտնի յետագայ պատմութեանս մէջ, եթէ մենք համոզուած չկինենք, որ Համլետի հայրը՝ մեռած է եղել զեռ ներկայացման սկզբից առաջ, ապա մի գիշեր տեսնելով նրան արևելեան քամու գիմաց թափառելիս իր սեփական պարիսպների վրայ՝ աւելի չէինք զարմանալ, քան եթէ նրա փոխարէն մի ուրիշ միջին հասակի պարոն լինէր անզգուշաբար պատում քամի տեղում, մի բուզէ հէնց ասենք՝ սուրբ Պօղոսի գերեզմանատանը—«իր որդու թոյլ միտքը ապշեցնելու նպատակով»:

Ծեր Մառլէյի անունը երբէք չչնջեց Սկսուջը: Ամբողջ տարիներ պահեստի դրան ճակատին մնաց նոյն «Սկսուջ ու Մառլէյ»-ը: Առեւարական տունը յայտնի էր իրեւ «Սկսուջ ու Մառլէյ»: Գործին անտեղեակները Սկսուջին երբեմն Սկսուջ էին անուանում, երբեմն—Մառլէյ, և նա երկու դէպումն էլ պատասխանում էր: Մինոյն բանն էր նրա համար:

*) Լոնդոնում առհասարակ թաղումը կապալով է տրտում:

Օ՛, նոյնիսկ քարեց իւղ կը հանկը նա իր ամուր ձեռներով: Յափշտակող, գոփող ու ազահ էր քափթառը: Պինդ ու անխնայ՝ ինչպէս կայծաքար, որից սակայն ոչ մի պողպատ ազնիւ կրակ չի հանել երբէք: Ծածկուող, ինքնազուսպ ու մենակեաց—ինչպէս ոստրէ: Ներքին սառնութիւնը սառցնում էր նրա հիւծուած դիմագծերը, չորացնում նրա սուր քիթը, կնճը-ռոտում երեսը, շղթայում քայլուածքը, կարմրացնում աչքերը, կապտացնում նուրբ շրթունքն ու անախորժ սուր շեշտ տալիս նրա զիւ ձայնին: Ցուրտ եղեամ էր նստել նրա գլխին, յօնքե-քին ու անթրաշ ծնօտին: Իր անձին յատուկ սառնամանիքը տարածում էր ամենուրեք և ամեն ժամանակ, տօներին սառց-նում էր զրասենեակը և այդ սառոյցը չէր հալեցնում ոչ մի տատիճան—նոյնիսկ ծննդեան տօնին:

Արտաքին տօթն ու ցուրտաը ոչ մի ազդեցութիւն չէր ա-նում Սկոռջի վրայ: Ոչ տօթից խաշուողն էր նա, ոչ էլ ցրտից սառչողը: Քամին նրա պէս կոպիտ չի փչում երբէք, ձիւնը նրա նման անյողողդ չի դիմում իր նպատակին, ոչ էլ անձրեն է նրա նման անխնայ մտրակում խնդրողին: Ամենավատ եղա-նակն անգամ չէր կարող մրցել նրա հետ:

Ամենասաստիկ անձրեւը, ձիւնն ու կարկուտը կարող են պարծենալ սակայն այն առաւելութեամբ, որ շատ անգամ նը-քանք խնայող են լինում, իսկ Սկոռջը—երբէք: Երբէք մէկը չէկանգնեցրեց նրան փառացում ուրախ-ուրախ ասելու. «Ի՞նչպէս ես, սիրելի Սկոռջ, Ցքը ո՞ս գալու իմ տեսութեանը»: Ոչ մի մուրացկան ձեռք չէր մելնում նրան, ոչ մի երեխայ չէր հար-ցընում նրանից, թէ ո՞ր ժամն է, Սկոռջի ամբողջ կեանքում ոչ մի մարդ կամ կին չնարցրեց նրանից այս կամ այն տեղի ճա-նապարհը: Նոյնիսկ կոյը մուրացկաններին առաջնորդող շնե-ըը *) կարծես ճանաչում լինէին նրան. նրա մօտենալը նկա-ռելիս՝ աշխատում էին իրանց տէրերին առաջնորդել մի դռան քամակ, կամ մի բակ և ապա պոչերն էին շարժում, կարծես ուզում լինէին ասել. «Վաս աչքը, կնյը տէրս, կուրութիւնից էլ վատթար է»: Բայց Սկոռջին ինչ փոյթ: Հէնց այդ էր նրա պրտի ուզաճն էլ: Ամբողջ կեանքը իր էշը քշի՝ ոչ մի ուշա-դրութիւն չդարձնելով շրջապատող խուն բազմութեան վրայ, հեռու մնալ առեն մի մարդկային զդազմունքից, — ահա թէ ինչն էր Սկոռջի սիրածը:

Տարուայ լաւագոյն օրերից մի ամենալաւ օր—Ծննդեան

*) Լոնգոնում կոյք մուրացկանները սովորեցրած շներ են ունենում:
Ե. Թ.

թաթախման օրը—ծեր Սկոռուջը զբաղուած՝ նստած էր իր գը-
րասենեակում: Յուրա, սառնամանիք ու վատ եղանակ էր, այն-
էլ մոայը Դուրսը, բակում մարդիկ փոնչալով գնում-գալիս
էին: ձեռները տրորելով ու ոտները սալայատակի քարերին
տալով տաքացնելու նպատակով. այդ բոլորը հասնում էր նրա
ականջին: «Սիտիժ-ի *» ժամացոյցը նոր էր երեքը խփել: բայց
արդէն բոլորովին մութն էր հէնց ցերեկն էլ ասենք այնքան
էլ լոյս չէր), և հարեան գրասենեակների. պատուհաններից ճը-
րագի լոյսը կարմիր բծերի էր նմանում թանձր, մոխրագոյն
օդի միջով: Ամենմի ճեղքից ու բանալիի ծակից մառախուզը
ներս էր հոսում, իսկ դրսում այն աստիճան թանձր էր, որ
չնայելով բակի նեղութեանը, դիմացի տները հաղիւ էին նըշ-
մարւում: Տեսնելով մոայլ ամպի խտանալն ու ամենինչ ծած-
կելը, կարելի էր ենթադրել, թէ բնութիւնը մեծ եփ ու թուխի
վրայ է:

Գրասենեակի դուռը բաց էր պահում Սկոռուջը, որպէսզի
կարողանայ աչքը գրագրի վրայ պահել, որը՝ դիմացի տակա-
ռանման փոքրիկ ու մոայլ խուցում նամակներ էր արտագը-
րում: Սկոռուջի վառարանում շատ քիչ կրակ կար. գրագրի վա-
ռարանի կրակը նրանից էլ պակաս լինելով՝ մի հատ ածուխ
լինէր կարծես: Բայց նա չէր համարձակւում ածուխ աւելացը-
նել, որովհետեւ Սկոռուջը իր սեփական սենեակումն էր պահում
ածիսի արկղը. և ամեն անգամ հէնց որ գրագիրը թիակը ձեռ-
քին ներս էր մտնում, իսկոյն տէրը յիշեցնում էր, որ երեկ
ստիպուած կը լինի բաժանուել նրանից: Այդ պատճառով գը-
րագիրը վիզը փաթաթեց իր սպիտակ շալովն ու սկսեց ճրա-
գի բոցովը տաքանալ. բայց որովհետեւ խեղճը զուրկ էր ուժեղ
երեակայութիւնից, այդ էլ չաջողութեց:

—«Ուրախ Ծնունդ, քեռի, Աստուած օրհնի քեզ», գոչեց
մի ուրախ ձայն, Այդ Սկոռուջի քրոջ որդու ձայնն էր, նա այն-
պիսի արագութեամբ փաթաթուեց քեռու վզովը, որ հէնց դը-
րանից միայն իմացաւ նրա գալը:

«Փա՞հ, ասաց Սկոռուջը, դատարկ բան: Այնքան տաքացել
էր ցուրտ ու մոայլ փողոցներով վազելիս Սկոռուջի քրոջ որ-
դին, որ կարծես կրակ լինէր. նրա երեսը կարմիր ու գեղեցիկ
էր, աչքերը փայլուն, իսկ քթի ծակերից գոլորշի էր փչումը
«Ծնունդն է դատարկ բան, քեռի», ասաց Սկոռուջի քրոջ որ-
դին,—«Ես հաւատացած եմ, որ հանաք ես անում:»

*) Լոնդոնի կենտրոնական մասն է:

— «Երբէք,—ասաց Սկոռուջը.—ուրամին Ծնունդ... ի՞նչ իրա-
ռանքով ես ուրախութիւն անում դու այդ աղքատ տեղովդ»:

— «Եթէ այդպէս է», ուրախ-ուրախ պատասխանեց երի-
տասարդը. «Ի՞նչ իրաւոնք ունես դժւ տիսուր լինելու. ի՞նչ
հիմք ունես դու քիթդ կախելու հարուստ տեղովդ»:

Սկոռուջը «փահճից լաւ պատասխան չգտնելով՝ դարձեալ
նոյն բացազնչութիւնն արձակեց և աւելացրեց. «Դատարկ բան»:

— «Հակառակ մի լինիր, քեռի», ասաց քրոջ որդին:

— «Բա էլ ի՞նչ կարող եմ անել», պատասխանեց քեռին,
«Երբ որ քեզ պէս յիմարների աշխարհումն եմ ապրում. Տես
հայ, ուրախ Ծնունդը Դնուրս կորիր քո ուրախ Ծնունդովդ: Էլ
ուրիշ լի՞նչ մի բան է քեզ համար Ծնունդը, եթէ ոչ հաջիւնե-
րով փող վճարելու ժամանակ՝ երբ որ գրպանումդ մի գոռշ էլ
չկայ, մի ժամանակ՝ երբ տեսնում ես, որ մի տարի էլ անցաւ,
բայց խելքդ մի մաղաչափ էլ չաւելացաւ, մի ժամանակ՝ երբ
հաշուեգրքերիդ գումարները տալով՝ նկատում ես, որ ամեն
բանում տարին տասներկու ամիս շարունակ վնաս ես ունեցել:
Եթէ կարողանայի ուզածս անել», ասաց Սկոռուջը զայրացած,
«ամեն մի յիմարի, որ «ուրախ Ծնունդը» քերնին պարապ
շրջում է, կ'եփէի իր սեփական պուդղինդի հետ միասին և տօ-
նածառի սուր ծայրը սիրտը խրելով՝ շանսատակ կ'անէի: Այս,
այդպէս կ'անէի»:

— «Քեռի», գոչեց քրոջ որդին:

— «Ծղա», —պատասխանեց քեռին լրջօրէն. «Դու քո ուզա-
ծիդ պէս տօնիր Ծնունդը և թող որ ես էլ իմ ուզածիս պէս
տօնեմ»:

— «Տօնեմ», կրկնեց Սկոռուջի քրոջ որդին: «Ախր դու չես
տօնում»:

— «Դէք, ուրեմն ձեռք քաշիր ինձնից», ասաց Սկոռուջը.
«Թող քեզ անի իր լաւութիւնը այդ Ծնունդը. հօ միշտ էլ
քեզ շատ է լաւութիւն արել»:

— «Շատ բան կայ, որոնցից ես կարող էի օգուտ քաղել,
առակայն համարձակում եմ ասել, որ երբէք չիմ օգտուելը, պա-
տասխանեց քրոջ որդին: «Ծնունդն էլ նրանցից մէկը: Բայց
Ծննդեան մասին ես միշտ միենոյն կարծիքին եմ եղել թէ դա
անկասկած մի լաւ, բարի տօն է, որ կայ. դեռ մի կողմը թո-
ղած այն յարգանքը, որ վայել է տօնիս սուրբ անուան և ծագ-
մանը (եթէ միայն կարելի է նրա վերաբերեալ որևէ բա-
նը մի կողմը դնել) — մի բարի, երկայնամիտ, ողորմած, ախոր-
ժելի օր. օրացոյցի միակ օրը ամբողջ տարուայ իմ գիտեցած
օբերիցս, երբ մարդ թէ կին կարծես միահամուռ համածայնու-

թեամբ ազատ բաց են անում իրանց փակ սրտերը և մտածում են իրանցից պակասաւոր մարդկանց մասին, իբրև իրանց խսկական ընկերների, որոնց հետ միասին պիտի գնան գերեզման. ոչ թէ դրանք մի այլ ցեղի պատկանող էակներ են, որ մի ուրիշ ճանապարհով պիտի գնան: Հետեւապէս՝ թէպէտ Ծընունդը երբէք իմ գրպանս ոչ մի կտոր ոսկի կամ արծաթ՝ չը զցել, ես հաւատում եմ, քեսի, որ նա ինձ լաւութիւն արել է և անելու էլ է դեռ. և ես ասում եմ, Աստուած օրհնի՛ այդ օրը: «Ճակառի» միջի գրագիրը բնազդարար ծափահարեց, բայց իսկայն նկատելով իր արածի անտեղի լինելը՝ սկսեց կրակը խառնել և բոլորովին հանգցրեց վերջին կայծը:

—«Եթէ մէկ էլ եմ լսել ձայդ», ասաց Սկոռուջը, «Ծընունդդ տօնելուց առաջ տեղիցդ կը դրկուես: Իսկ դու, պարոնս, կատարեալ ճարտարախօս հոնտոր ես եղել», աւելացրեց նաև դառնալով իր քրոջ որդուն. «Զարմանում եմ, թէ ինչո՞ւ չետ գնում պառակմենտը:—«Մի նեղանար, քեռի, եկ, ճաշիր մեղ հետ վաղը», Սկոռուջն ասաց, երանի թէ նրան տեսնէր... *) այս, այդպէս էլ ասաց: Նա վերջացրեց նախագասութիւնը և ասաց, թէ գերադասում է նրան այդ ծայրայեղ դրութեան մէջ տեսնել:—«Ախր ինչո՞ւ», կոչեց Սկոռուջի քրոջ որդին:—«Ի՞նչո՞ւ, ինչո՞ւ պսակուեցիր», ասաց Սկոռուջը:—«Որովհետեւ սիրահարուել էի:—«Որովհետեւ սիրահարուել էիր», մրժմրթաց Սկոռուջը, իբրև թէ սիրահարուելը աշխարհիս երեսին միակ նքանն էր, որ «ուրախ Ծննդից» էլ ծիծաղելի էր:—«Յտեսութիւն»:—«Ոչ, քեռի, բայց դու պսակուելուց» առաջ էլ երբէք չէիր գալիս իմ տեսութեանը: Ինչո՞ւ ետ այդ պատճառը մէջ բերում:—«Յտեսութիւն», ասաց Սկոռուջը:—«Ես ոչ մի կարիք չունեմ և ոչինչ չեմ ինդրում քեզնից, ինչո՞ւ չես ուզում, որ մենք բարեկամ լինմնք:»—«Յտեսութիւն», ասաց Սկոռուջը:—«Ի սրտէ ցաւում եմ, որ դու այդքան հաստատ ես վճռիս: Մենք երբէք որևէ վէճ չենք ունեցել, որ իմ մեղքիցս լինէր: Սա մի փորձ էր, որ ես արի ի պատիւ Ծնընդեան և իմ տօնական տրամադրութիւնս պահպանում եմ մինչև վերջը: Դէ, ուրեմն, ուրախ Ծնընդի: քեռիս:—Յտեսութիւն», ասաց Սկոռուջը:—«Եւ բախտաւոր նոր տարի»:—«Յտեսութիւն», ասաց Սկոռուջը:

Չնայելով սրան՝ նրա քրոջ որդին առանց մի խօսք ցուրտ ասելու դուրս եկաւ սենեակից: Ելքի գրան մօտ նա կանգ առաւ-

*) Երկի մեռած կամ մի այլ այսպիսի բան, որ հեղինակը անվանել է համարում կրկնել:

աւուր պատշաճի բարեմաղթութիւններն անելու գրագրին, որինչքան էլ սառած լինէր, այնուամենայնիւ Սկզուջիցը ջերմ էր, որովհետև սրտանց պատասխանեց չնորհաւորութիւններին:

— «Այս լակոտն էլ նրա կառըն է», սրթմբթաց Սկզուջը, որի ականջին էր հասել նրանց փոխադարձ չնորհաւորութիւնները. շարաթը 15 շիլլին ^{*)} ստացող գրագրի մէկը, կնոջ ու զաւակների տէր, նա էլ է «Ուրախ Ծննդեան» մասին խօսում։ Սրանը գժուացնելու են ինձ։

Սկզուջի քրոջ որդուն դուրս թողնելիս՝ այդ տըխմարը ներս էր թողել երկու ուրիշ մարդ; Համակրելի արտաքինով երկու վայելչակազմ պարոն էին՝ ձեռներին թուղթ ու տետրակներ; Գրասենեակը մտնելով ու բարեւելով Սկզուջին՝ «Սկզուջ ու Մարլէյ կարծեմ», ասաց պարոններից մէկը, դիմելով իր թերթին։ «Պ. Սկզուջն է, թէ պ. Մարլէյը, որի հետ այժմ պատիւ ունեմ խօսելու»։ — «Արդէն եօթը տարի է, որ պ. Մարլէյը մեռել է», ասաց Սկզուջը։ «Եօթը տարի առաջ հէնց այս իսկ գիշերու մեռաւ նա»։ — «Նրա կենդանի մնացած ընկերը պակաս առատածենն չի անկասկած», ասաց պարոնը՝ ներկայացնելով իր հաւատարմաթղթերը։ Հէնց այդպէս էլ էր, որովհետև երկու ազգակից հոգիներ էին դրանք։ «Առատածենն չարաբաստիկ խօսքից Սկզուջը կնճռոտեց իր ճակատը, զլուխը թափ տուեց և վերադրեց հաւատարմաթղթերը։ — «Տարուայ այս տօն օրերին, պ. Սկզուջ», ասաց պարոնը՝ մի գրիչ առնելով ձեռքը, «աւելի քան երբեկցէ ցանկալի է, որ մենք մի թեթև օդնութիւն հասցնենք աղքատ ու զուրկ մարդկանց, որոնք այժմ մեծ կարօտութեան մէջ են։ Հազարաւոր մարդիկ միջոց չունեն իրանց ամենահասարակ անհրաժեշտ կարիքները գոհացնելու։ հարիւր հազարաւորները զուրկ են ամենատարրական յարմարութիւններից, տէր իմ»։

— «Բանտեր չկանա, հարցրեց Սկզուջը, — «Շատ», ասաց պարոնը կրկին գրիչը ցած դնելով։ — «Իսկ Միութեան գործատըները», հարցրեց Սկզուջը. դեռ չեն փակուել հօ»։ — «Կան դեռ Սակայն», պատասխանեց պարոնը, «կարող եմ ասել, ես կը ցանկանայի, որ իսկի չլինէին դրանք»։ — «Իսկ թիարանները հօ չեն քանդուել, մուրացկանութեան վերաբերեալ օրէնքը հօ չէ կորցրել իր ոյժը», հարցրեց Սկզուջը։ — «Ո՛չ, ոչ, տէր իմ»։ — «Ո՞հ, ես սաստիկ վախեցայ ձեր առաջուայ խօսքերից, թէ մի գուցէ որևէ բան լինի պա-

*) Մօտ 7 ըուբի։

տահած այդ օգտաւէտ հիմնարկութիւններին», ասաց Սկռուջը: «Շատ ուրախ եմ, որ ոչինչ չի պատահել»: — «Աչքի առաջ ունենալով, որ դրանք աղքատ դասակարգի բազմութեանը հազիւ թէ ըրիստոնավայել մտաւոր և նիւթական մնունդ լինեն մատակարարելիս», պատասխանեց պարոնը, «մենք մի քանի հոգով աշխատում ենք հանգանակել մի գումար և չքաւորների համար մի քիչ ուտելիք, խմելիք ու վառելիք գնել Այս օրուայ օրս ենք ընտրել, երբ կարիքը աւելի խիստ է զգացւում, իսկ ունենորը աւելի ևս յղփանում է: Ի՞նչ նշանակեմ ուրեմն ձեր անունից»: — «Ոչինչ», ասաց Սկռուջը: — «Ուրեմն դուք կամենում էք անյայտ մնալ»: — «Ես կամենում եմ, որ ինձ հանգիստ թողնէք», ասաց Սկռուջը: «Եթէ իմ կամքս էք հարցնուա, պարոն, ահա իմ պատասխանս. ես ինքս էլ քէֆ չեմ անուա Ծննդեան տօնին և ուրեմն չեմ կարող ծոյլերի համար քէֆի փող տալ: Ես օգնուամ եմ վերկը յիշածս հիմնարկութիւնների պահպանութեանը, որոնք էժան չեն նստում. և ով որ կարիք ունի, կարող է զիմել նրանց»: — «Շատերը չեն կարող դիմել նրանց, շատերն էլ նոյնիսկ մահը գերադաս են համարուամ»: — «Եթէ այդպէս է, թող էնց կոտորուեն ու պակսեցնեն աւելորդ աղդաբնակութեան թիւը: Վերջապէս, ներեցէք, այդ ինձ չէ էլ վերաբերուամ»: — «Ի՞նչպէս թէ չէ վերաբերուա, նկատեց պարոնը: — «Այդ իմ գործը չէ», պատասխանեց Սկռուջը: «Բաւական է, որ մարդ իր սեփական գործը լաւ վարի, իսկ ուրիշների գործին խառնուելը աւելորդ է արդէն: Ես շարունակ զբաղուած եմ իմ գործովս. ցտեսութիւն, պարաններ:

Նկատելով՝ որ շարունակելը անօգուտ է պարզապէս, պարանները հեռացան: Սկռուջը կրկին իր գործին կպաւ, բոլորովին գոն իր տուած պատասխանով, նոյնիսկ տրամադիր հանագներ անելու:

Մինչայս մինչայս՝ մառախուղն ու մութը այնքան խըտացան, որ շատերը վառ լապտերները ձեռքերին այս ու այն կողմն էին վազգուում ու իրանց ծառայութիւնը առաջարկուա կառապաններին, — ձիաների առաջը լոյս անել ու ճանապարհ ցոյց տալ եկեղեցու հին զամբակատունը (որի գոթական պատուհանից մուայլ զանգակը միշտ խորամանկ հայեացք էր գըցում Սկռուջի վրայ) այլ ևս չէր երևում. իսկ ժամերն ու քառորդները ամպի միջիցն էին զօդանջում: դողդոջուն արձագանգ սփուելով օղում, կարծես զանգակատան սառած գլխից ատամների բաղխոց լինէր հնչելիս: Ցուրտը սաստկացաւ: Գլխաւոր փողոցի վրայ, բակի անկիւնում մի քանի բանուոր գազի խողովակներ էին կարկատում և կրակ էին անուամ կրա-

կարանում, որի շուրջը հաւաքուել էին ցնցոտիներում կորած մարդիկ ու երեխաներ և հիացմունքով ձեռներն էին տաքացը-նում ու աչքերը ճպճպացնում կրակի դիմաց, Զըանցըի անուշաղրութեան մատնուած ծորակից հոսող ջուրը մտածոլոր սառել էր ու մի անորոշ մարդատեաց տեսք ընդունել, Տօնածառներով ու պտուղներով լիբը խանութների լուսաւորուած պատուհանների առաջ անցորդների գունատ դէմքերը կարմը-րին էին տալիս: Հաւաքաճառների ու կանաչեղին ծախողների կրպակների տեսարանը հրաշալի ու փառահեղ էր: Համարեա անհաւատալի էր թւում, թէ այս բոլորը «առևտուր» անուանուած ձանձրալի պարապմունքի հետ որևէ առընչութիւն ունենայ: Լորդ-մերը հզօր Մէնշըն-Հառուսի^{*)}) ամրոցից հրաման տուեց իր յիսունաչափ խոհարարներին ու տակառապետներին տօնել Ծնունդը, ինչպէս որ վայել է լորդ-մերի տնտեսութեանը, նոյնիսկ փոքրիկ դերձակը, որ վերջին երկուշաբթի օրը հարբած անկարգութիւններ էր արել փողոցում ու հինգ շիլ-լինգ տուգանքի ենթարկուել, նա էլ իր վերնայարկի սե-նեակում յաջորդ օրուայ պուդդինգն էր արորում, մինչդեռ նրա լղար կինն ու երեխան դուրս էին գնում միս գնելու:

Մառախուզը թանձրանում էր և սառնամանիքը սաստկա-նում: Յուրաց մարդուս ոսկորների ուղեղն էր սառցնում: Եթէ քարի սուրբ Դուռստանը իր սովորական գործիքը^{**)} բանեցնե-լու փոխարէն չար Ոդու քիթը մի այդպիսի ցրտի տակ գցէր, —հաւատացնում եմ, որ վերջինս ծիծաղաշարժ բռնչոց կ'ար-ձակէր: Մի ջահիլ տղայ, որի ողորմելի քիթը խածոտել ու կրծոտել էր քաղցած սառնամանիքը շան բերան ընկած ոսկորի նման, կուացաւ, որ Սկոուջի դրան բանալու ծակիցը «Աւետիք» ասի նրա համար. բայց հէնց որ լսուեցին առաջին խօսքերը՝ «Աստուած օրնին ձեզ, ուրախ պարոն, Աստուած ձեզ աև օր չը-տայ», —Սկոուջը մի այնպիսի կատաղութեամբ բաննուը վերցը-րեց, որ երգիչը փախաւ սարսափից՝ բանալիի ծակը թողնե-լով մառախուղին և Սկոուջի սրտակից սառնամանիքին: Վեր-ջապէս գրասենեակը փակելու ժամը հասաւ: Սկոուջը ակամայ իջաւ իր աթոռից և լուր իմաց արաւ «տակառի» մէջն սպասող գրագրին, որ իսկոյն իր ճրագը հանգցրեց ու գդակը ծածկեց:

—«Երեսի վաղը ամբողջ ծըն ես ուզում տօնել», ասաց Սկոուջը:

^{*)} Այդպէս է անուանում Լոնդոնի լորդ-մերի ապարանքը:

^{**)} Հստ աւանդութեան ս. Դուռստանը շիկացած ոմելիքով բռնել է սա-տանայի քիթը, երբ վերջինս փորձել է գայթակղեցնել սրբին: Ե.

— «Եթէ կարելի է, պարհն»:

— «Ոչ կարելի է և ոչ էլ արդարացի», ասաց Սկոռշը:
«Եթէ դրա փոխարէն կէս կոռն կտրեմ քեզնից, կ'ասես, թէ
վաս եմ վարւում»:

Գրագիրը ժպտաց անհամարձակ:

— «Բայց դու վմտ չես վարւում ինձ հետ», ասաց Սկոռշը:
«Երբ որ մի ամբողջ օր առանց բանելու ուզում ես ոռնիկ
ստանալ»:

Գրագիրը նկատեց, որ այդ բանը տարին մի անգամ է
պատահում:

— «Ողորմելի պատրուակ մարդու գրպանն ամեն տարի
դեկտեմբերի 25-ին կտրելու համար», ասաց Սկոռշը՝ վերար-
կուն մինչև ծնօւը կոճկելով. «Այսուամենայնիւ երկի դու
ամբողջ օրը չես գալու: Ուրեմն գոնէ միւս օրուայ առաւոտը
կանուի այստեղ եղիր»:

Գրագիրը խոստացաւ, և Սկոռշը փնթփնթալով դուրս ե-
կաւ: Մի ակնթարթում գրասենեակը փակուեց, և զրագիրը իր
սպիտակ շալի երկար, մինչև մէջը համառող ծայրերը օրորելով
(որովհետև վերարկու չունէր) ի պատիւ Ծննդիան թաթախմտն-
մի խումբ երեխաների հետ քսան անգամ կոռնհիլի սաղցի
(Տիւմե) վրայ այսուայն կողմ սահեց և ապա վազեց դէպի կեմ-
դըն-Տառն աչքակապուկի խաղալու:

Սկոռշը իր մոայլ ճաշն արաւ սովորական մոայլ ճաշա-
րանում և կարդալով բոլոր լրագրերը և երեկոյեան մնացորդը
իր հաշուետոմարների վրայ անցկացնելով գնաց տուն քնելու:
Նա այն բնակարանումն էր ապրում, ուր երբեմն ապրել էր
նրա հանգուցեալ ընկերը, Բակի ծայրում գտնուող մոայլ տան
միջի մութ սեննակների մի շարք էր դա, որ կարծես սխալ-
մամբ էր ընկել այդտեղ (երսի գեռ ջանիլ ժամանակը իր հա-
րևան տների հետ աչքակապուկի խաղալիս) և ապա մոուցել
էր դուրս գալու ճանապարհը Այժմ նա բաւականին հնացած
ու մոայլ էր, որովհետև բացի Սկոռշից ոչոք չէր ապրում:
այստեղ. մնացեալ սեննակները վարձու էին տրուած գրասե-
նեակների համար: Բակն այնքան մութն էր, որ նոյնիսկ
Սկոռշը ծանօթ լինելով նրա ամեն մի քարին՝ ստիպուած էր
խարխափելով առաջ գնալ: Մառախուղն ու սառնամանիքը
այսպէս էին կոխել տան սե, հին դարպասը, որ կարծես եղա-
նակի Ոգին լինէր մտամոլոր նստած շեմքում:

Դարպասի մուրճը բացի իր անշափ մեծութիւնից անկաս-
կած էլի մի ուրիշ աչքի ընկնող առանձնայատկութիւն չունէր:
Կասկած չկայ որ Սկոռշը տեսնում էր միենոյն մուրճը ամեն-

առաւօտերեկոյ, քանի որ այդ տանն էր ապրում, անկասկած է նոյնպէս, որ Սկոուջը այնքան քիչ գործ ունէր երեակայութիւն ասուած բանի հետ, որքան որ լոնդոնի Սիտիի մնացեալ բնակիչները, նոյնիսկ (ներեցէք համարձակութեանս) բացառութիւն չանելով քաղաքային խորհրդի աւագների ու գիլդիականների համար։ Աչքի առաջ ունենալով, որ Սկոուջը առաւօտը իր «եօթնամեայ հանգուցեալ» ընկերոջը յիշելուց յիտոյ այնույետ իր մտքերից մի հատիկն էլ չէր նուիրել Մառլէին, — թող ով որ կարող է բացատրի, թէ այդ ինչպէս պատճեց, որ Սկոուջը բանալին իր զրան կողպէքի մէջ դնելով՝ նկատեց, որ դրան մուրճը առանց ոնէ միջանկեալ գործովութեան ենթարկուելու այլևս մուրճ չէ, այլ Մառլէյի գէմքն է։

Այս, Մառլէյի դէմքը, որ բակում եղած ուրիշ բաների նման անթափանց մթութեան մէջ չէր, այլ շրջապատուած էր մի տեսակ տիսուր լուսով՝ մութ ներքնատնում լոյս տուող փըշացած խեցգետնի նման։ Ոչ բարկացած և ոչ կպտաղի էր նա։ Մառլէյի սովորական հայեացքովն էր նայում Սկոուջին՝ աննիւթական ակնոցը իր անմարմին ճակտուին քաշած։ Նրա մազերը մի տեսակ օտարօտի շարժման մէջ էին կարծես շնչառութեան կամ տաք օդի հոսանքից։ Խակ աչքերը թէպէտ բաց էին լայն-լայն, բայց անշարժ էին կատարելասէս։ Այդ հանգամանքը և գոյնի կապտութիւնը սարսափելի էին դարձնում այդ դէմքը, սակայն սարսափը նրա արտայայտութեան անբաժան մասը չէր կազմում, այլ կարծես այդ դէմքից անկախ էր և նրա իշխանութիւնից դուրս։ Երբ Սկոուջը անթարթ նայում էր այդ երևոյթին, կրկին դրան մուրճն էր նրա աչքի առաջ։ Ասել՝ թէ նա չէր վախեցել, կամ թէ նրա արիւնը չէր սառչում սարսափի զգացմունքից, որ երեխայութիւնից անծանօթ էր նրան, ճիշտ չէր լինի։ Սակայն նա կրկին ձեռքը մեկնեց բանալիին, որ բաց էր թողել, թափով շուռ տուեց, ներս մտաւ ու ճրագը վառեց։ Վայրկենական անվճռականութեան մէջ նա կանգ առաւ դուրս փակելուց առաջ և զգուշութեամբ նայեց նրա քամակը, կարծես մասամբ սպասելիս լինէր, թէ ներսն էլ Մառլէյի ծամըն է դրան յետեկից ցցուելով՝ սարսափահար անելու իրան։ Բայց տեսնելով՝ որ ոչինչ չկայ բացի միքանի հատ պտուտակից, որոնցով մուրճը ամրացրած էր դրան վրայ, նա «պունպուն» արաւ ու դուռը փակեց շրխկոցով։

Այդ ձայնի որոտը թնդաց ամբողջ տան մէջ։ Վերևի ամենմի սենեակ, և ներքնում՝ գինեվաճառի ներքնատան ամենմի տակառ կարծես մէկիկ-մէկիկ արձագանգ տուին։ Սկոուջը արձագանգներից վախեցող պտուղը չէր։ Նա ամրացրեց դուռը

և սրահովն անցնելով հանդարտութեամբ՝ բարձրացաւ սանդուխները, ճանապարհին ճրագի պատրոյգն ուղղելով:

Վեցձիանի կառքը հինաւուրց լայնարձակ սանդուխներով վեր քշելու մասին կարելի է ինչքան ուզէք անորոշ պատմութիւններ անել, բայց ևս ուզում եմ ասել, թէ այդ սանդուխներ կարելի էր մի դիակառք քաշել վերը՝ լծակը դեպի պատն արած, իսկ դուռը—դէպի վանդակապատը, այն էլ հեշտութեամբ. սանդուխն այնքան ընդարձակ էր, որ դեռ էլի ազատ տեղ կը մնար, և երկի հէնց այդ էր պատճառը, որ Սկոռտջին թուաց, թէ մի ինքնաշարժ դիակառք է երեւում մթութեան մէջ իր առաջին: Նոյնիսկ փողոցային գաղի լապտերներից վեցի լոյսն էլ շատ առատ չէր լուսաւորի այդ ընդարձակ սրահը. ուրիմն կարող էր երեսակայել, թէ ինչ կը լինէր Սկոռտջի ճարպէ ճրագի լոյսը: Սկոռտջը բարձրանալիս՝ գրա մասին շատ էլ հոգս չէր անում. մթութիւնը էժան բան է, որ Սկոռտջի սիրածն է: Բայց իր ծանր դուռը փակելուց առաջ նա անցաւ սենեակներով, որ տեսնի, թէ կարգին է արգեօք ամեն բան:

Հիւրասենեակում, ննջարանում, մառանում ամեն բան կարգին էր: Սեղանի ու թախտի տակ բան չկար: Մի քիչ կը-րակ կար բուխարում. պնտին ու գդալը պատրաստ. մի փոքրիկ աման ճաշ կրակի վրայ: Ո՛չ մահճակալի տակը, ոչ պահարանում, ոչ իր խալաթի մէջ, որ կախ էր պատին կասկածելի դիրքով—ոչինչ չկար: Մառանում, ինչպէս որ միշտ, մի հին կրակարան էր, մի զոյտ հին կօշիկ, երկու ձկնեղէնի կողով, մի լուացարան—երեք ոռնանի և մի անթրոց:

Բոլորովին միամտուած՝ նա վակեց դուռը ներսից, սովորութեան հակառակ երկու անգամ շուռ տալով բանալին, եւ այդպիսով ապահովուած ամեն մի անակնկալ դէպքից՝ նա հնչեց իր փողպատը, հազար խալաթն ու հողաթափերը, ծածկեց գիշերուայ գդակն ու նստեց կրակի առաջ իր ընթրիքն ուտելու:

Իսկապէս դա մի չնչին կրակ էր, ոչինչ բան այդչափ ցուրտ գիշեր: Նա ստիպուած էր մօտենալ ու թեքուել վառարանի վրայ, որ զգայ նրա մի բուռն ածուխի տաքութիւնը: Վառարանը մի հին բան էր, վաղուց մի հոլլանդացի վաճառականի շինած, զարդարուած գեղեցիկ նկարովի հոլլանդական աղիւսներով. պատկերները վերաբերում էին սուրբ գրքից վերցրած զանազան դէպքերի լուսաբանութեան. Կայէններ ու Աբելներ, փարաւոնի դուստրներ, Շաբանի թագուհիներ, փետրանման ամպերը վրայ օդովն իջնող Աբրահամներ, Բաղդասար-

ներ ու առաքեալներ՝ իւղամանների մէջ նստած ծովը մտնելիս. հարիւրաւոր դէմքեր, որ պիտի գրաւէին նրա միտքը. բայց կրկն հինաւուրց մարգարէի գաւազանի նման նոյն «եօթնամեայ հանգուցեալ» Մառլէյի դէմքը ամեն ինչ կլանեց. եթէ սկզբից ամենմի հարթ աղիւս սպիտակ լինէր և ընդունակ նրա մտքի մասնիկները արտացոլելու, այն ժամանակ ամենմի աղիւսի վրայ Մառլէյի գլխի պատճէնը կը լինէր տպաւորուած:

— «Դատարկ բան է», ասաց Սկռուջը և սկսեց անցուդարձ անել սենեակում:

Մի քանի պտոյտից յետոյ նա կրկին նստեց. երբ նա գլուխը յետ զցեց աթոռի մէջքին, նրա հայեացքը կանգ առաւ սենեակում կախ զանգի վրայ, մի գործածութիւնից դուրս եկած զանգ, որ մի անյայտ, այժմ մոռացուած նըսպատակով կապ ունէր վերի յարկի հետ. Հէնց որ նայեց, մեծ զարմանքով և օտարոտի, անբացատրելի սարսափով նկատեց, որ զանգն սկսում է օրօրուել: Սկզբուա այնքան հանդարտ էր օրօրուում, որ հազիւ էր ձայն հանում. բայց շուտով նրա ձայնը բարձրացաւ. տան միջի մնացեալ զանգերն էլ սկսեցին ձայնակցել, որ տնեց կէս ըռպէ, կամ շատ-շատ մի ըռպէ, բայց Սկռուջին մի ամբողջ ժամ թուաց այդ ըռպէն: Ինչպէս որ միասին սկսել էին, այնպէս էլ միասին դադարեցին զանգերը, որոնց ձայնին յաջորդեց գինելաճառի ներքնատնից լսուող շըղթայի զնգզնգոցը, որ կ'ասես մէկը քարշ էր տալիս տակառների վրայով: Այն ժամանակ Սկռուջը յիշեց, որ շատ անգամ լըսած կար, թէ այն տներում, ուր չար հոգիներ են լինում, յաճախ լսուում է նրանց շղթաների ձայնը: Ներքնատան դուռը բացուեց աղմկալից շրխկոցով, շղթայի ձայնը սաստկացաւ սրահում, սանդուխի վրայ, ապա ուղղակի մօտեցաւ նրա սենեակի դրաննը:

— «Դատարկ բաներ են», ասաց Սկռուջը. «Հեմ հաւատում այդպիսի բաների»:

Սակայն երբ Ուրուականը կանգ չառնելով փակ դըրան առաջ՝ նրա աշքի առաջին անցաւ ու սենեակը մտաւ, — նրա գոյնը թռաւ: Վառարանի մարող կրակը բոցավառուեց իսկոյն, կարծես ուղղում էր ասել. «Ճանաչում եմ, Մառլէյի Ուրուականն է», և կրկին մարեց:

Նոյն դէմքն էր, իսկեմս նոյնը: Մառլէյն էր իր խողի պոչի նման ծամովը, իր մշտական ժիլետը, նեղլէկ վարտիքն ու կօշիկները հազին: Կօշկի վրայի փնջերը ցից էին նրա ծամի, վերնազգեստի փեշերի և գլխի մազերի նման: Երկար

շղթան պոչի նման նրա մէջըովն էր տուած: Մօտիկից Սկոռուջը նկատեց, որ շղթան բազկացած էր փողի արկներից, բանալիներից, կողպէքներից, հաշուեմատեաններից, վաւերաթղթերից և ծանր, պողպոտեայ փողի քսակներից: Նրա մարմինը թափանցիկ էր, այնպէս որ Սկոռուջը նրան նայելիս վերնազգեստի միջովը տեսնում էր նոյն վերնազգեստի քամակի զոյգ կոճակը:

Շատ անգամ էր Սկոռուջը լսել ուրիշներից, թէ Մառլէյն անսիրտ է, բայց մինչև օրս երբէք չէր հաւատացել դըրան: Ոչ. նա նոյնիսկ այժմ էլ չէր հաւատում: Թէպէտ Սկոռուջի հայեցքը թափանցում էր Ուրուականի մարմնի միջով և տեսնում էր նրան իր առաջին կանգնած, թէպէտ զգում էր նրա մեռած-պաղ աչքերի սաւցնող ազդեցութիւնը, թէպէտ նոյնիսկ նրա ծնօտի տակով զլիին կապած թաշկինակն էլ ճանաչեց (այդ փաթաթանը նա առաջ չէր նկատել), սակայն նա դեռ չէր հաւատում և կասկածով էր վերաբերում իր զգայրանների ցուցմունքներին:

— «Ի՞նչ կայ», հարցրեց Սկոռուջը իր մշտական սառն ու անախորժ շեշտով: «Ի՞նչ ես ուզում ինձնից»:

— «Շատ բան»: Անկասկած Մառլէյի ձայնն էր:

— «Ո՞վ ես զու»:

— «Ո՞վ էիր ասամ»:

— «Ո՞վ էիր ուրեմն», ասած Սկոռուջը՝ ձայնը բարձրացը նելով: «Ի՞նչ սազ մի Ուրուականի այդ աստիճան բծախնդրութիւն»:

— «Կենդանի ժամանակս եսքո ընկեր Յակոբ Մառլէյն էի»:

— «Կարող ես... Կարող ես դու, արդեօք... նստել», հարցրեց

Սկոռուջը՝ կասկածու աչքերով նայելով նրան:

— «Կարող եմ»:

— «Նստիր ուրեմն»:

Սկոռուջն այդ հարցը տուեց, որովհետև չէր հաւատում, թէ մի այդպիսի թափանցիկ Ուրուական կարողանայ նստել, և յոյս ունէր այդպիսով նեղը գցել նրան ու ազատուիլ անսխորժ խօսակցից: Բայց Ուրուականը նստեց վառարանի միւս կողմը, կարծես թէ այդ բանին բոլորովն սովոր լինէր:

— «Դու ինձ չես հաւատում», նկատեց Ուրուականը:

— «Ոչ», ասաց Սկոռուջը:

— «Իրականութեանս մասին ուրիշ էլ ի՞նչ ապացոյց ես ուզում, բացի զգայարաններիդ վկայութիւնից»:

— «Չգիտեմ», ասաց Սկոռուջը:

— «Ի՞նչի՞ւ չես հաւատում զգայարաններիդ»:

-- «Որովհետեւ, ասաց Սկոռուջը, «ամենմի չնշյան բան, օքինակ՝ ստամոքսի մի թեթև խանգարումն կարող է զգայացնաները սխալի մէջ զցել: Կարելի է դու մի կտոր անմարսելի միս ես, մի քիչ մանանեխ, մի կտոր պանիր, հում գետնախընձորի մի կտոր ես: Ով որ էլ լինես, քեզնից աւելի քելեխի հոտ է գալին, քան թէ մեռելիս:

Սկոռուջն առհասարակ հանաք անողը չէր, մանաւանդ այժմը նրա սիրտը բոլորովին տրամադրիր չէր կատակ անելու, ծշմարիտն այն է, որ նա աշխատում էր սրամիտ լինել, յուսալով գրանով ցրել իր ուշադրութիւնը և ճնշել սարսափի զգացմունքը, որովհետև Ուրուականի ձայնը նրա ոսկըների ծուծն էր թափանցում:

Մի բոաէ լուս նստել ու նայել այդ անթարթ, ապակեայ աչքերին՝ մի տաժանելի փորձութիւն էր Սկոռուջի համար: Իսկապէս սարսափելի էր նրա դրութիւնը, որովհետև Ուրուականը կարծես շրջապատուած լինէր իր սեփական դժոխային մթնոլորտովը: Ինըը չէր զգում այդ, բայց պարզ է, որ այդ էր Սկոռուջի սարսափի պատճառը, որովհետև թէպէտ Ուրուականը բոլորովին անշարժ էր—նրա մազերը, փեշերը, կօշկի փնջերը գեռ շարժւում էին կարծես տաք թոնրի բոցից:

«Ճեսնում ես այս քչփորիին», ասաց Սկոռուջը՝ յարձակողական դիրք բռնելով վերը յիշած պատճառովը և ցանկանալով գոնէ մի վայրկեան Ուրուականի անշարժ հայեացքը գարձնիկ էրանից:

«Ճեսնում եմ», պատասխանեց Ուրուականը:

«Ա՛խը գու չես էլ նայում նրան», ասաց Սկոռուջը:

«Այսուամենայնիւ տեսնում եմ», ասաց Ուրուականը:

«Լաւ», պատասխանեց Սկոռուջը. «Եթէ ես այս բանը կուլ տամ, կեանքիս ամբողջ մնացորդը շրջապատուած պիտի լինեմ զանազան Ոգիներով, որ սակայն բոլորն էլ իս սեփական երեւակայութեանս ծնունդը պիտի լինեն: Դատարկ բաներ են դրանք՝ ասում եմ, դատարկ»:

Այս ժամանակ Ուրուականը մի այնպիսի զարհութելի աշղակ արձակից և շղթան թափ տալով՝ մի այնպիսի ողբագին ու սարսափելի ձայն հանեց, որ Սկոռուջը պինդ կպաւ աթոռին՝ վախենալով վայր ընկնի ուշաթափ: Բայց աւելի ևս մեծ էր նրա սարսափը, երբ Ուրուականը հանեց իր գլուխ գեթաթանը (կարծես թէ շոգ էր սենեակում), և նրա ներքենի ծնօտը կախ ընկաւ կրծքի վրայ:

«Խնայիր ինձ», ասաց Սկոռուջը, «ո՞հ, զարհութելի տեսիլը, ինչո՞ւ ես դու տանջում ինձ»:

— «Ո՞հ, դու ունայն աշխարհի զաւակ», պատասխանեց Ուրուականը. «Հաւատում ես այժմ ինձ, թէ ոչ»:

«Հաւատում եմ», ասաց Սկոռոջը: «Պիտի հաւատամ: Բայց ինչու են Ոգիները պատում երկրում և ինչու են ինձ մօտ գալիս»:

— «Հարկաւոր է, որ», պատասխանեց ուրուականը, «ամեն մարդու հոգի պատի աշխարհում իր ընկեր-մարդկանց մէջ միշտ ու հանապազ: Եւ ում հոգի որ կենդանութեան ժամանակ չի կատարել ասած, դատավարութուած է մահից յետոյ թափառել աշխարհում, վայ ինձ, և վկայ լինել այնպիսի բաների, որոնց այլա չի կարող մասնակցել, բայց կենդանի ժամանակը կարող էր մասնակցել և... բախտաւորուելք»:

Ուրուականը կրկին աղաղակ արձակեց և թափ տուեց շղթան՝ իր աննիւթական ձեռները կոտրտելով:

— «Ասա ինձ, ինչու ես դու շղթայակապ», հարցրեց Սկոռոջը:

— «Կենդանութեանս ժամանակ սեփական ձեռներովս կը-ռածն է սա», պատասխանեց Ուրուականը: «Ի՞նքս եմ շինել օղակ-օղակ և կանգուն-կանգուն. իմ ազատ կամքովս է, որ ինձ շղթայակապ եմ արել և իմ ազատ կամքովս եմ կրում այս շղթան: Միթէ սրա տեսքը օտար է քեզ համար»,

Սկոռոջը սկսեց աւելի սաստիկ դողալ:

— «Կարելի է դու ուղում ես քո սեփական ամուր շղթայի ծանրութիւնն ու երկարութիւնն իմանալ», շարունակեց ուրուականը: «Քոնն էլ իմիս չափ ծանր ու երկար էր գեռ եօթը տարի սրանից առաջ, թաթախման գիշերը: Այսուհետև դու աշխատել ես նրա վրայ և մի հաստ ու պինդ շղթայ ես շինել»:

Սկոռոջը աչքերը գցեց իր շուրջը, յատակին, սպասելով իրան էլ կապած տեսնել յիսուն-վաթսուն սաժէնանոց երկաթէ պարանով. բայց նշինչ էլ չտեսաւ»:

— «Յակոր», գոչեց նա լալազին, «Յակոր Մառէյ ջան, խօսիր, միտթարիր ինձ, Յակնը ջան»:

— «Միտթարական և ոչ մի խօսք չունեմ քեզ համար», պատասխանեց Ուրուականը: «Ուրիշ տեղերից է գալիս միտթարութիւնը, էքենեզար Սկոռոջ, ուրիշ էակների ձեռքով և ոչ քեզ նման մարդկանց համար: Ես չեմ կարող ասել քեզ ուզածըս: Շատ քիչ բան է թոյլատրուած ինձ: Ո՛չ մի տեղ չեմ կարող հանգստանալ, ոչ կանգ առնել և ոչ մնալ: Կենդանութեանս ժամանակ հոգիս երբէք մեր գրասենեակից դուրս չէր գալիս— լաւ լսիր ասածս—չէր գուրս գալիս մեր խանութի նեղ սահ-

մաններից, և այժմ ես դատապարտուած եմ ծանը ճանապարհորդութիւններ անելու:

Սկսուած սովորութիւն ունէր մտախոհութեան բոպէններին ձեռները կոխել իր վարտիքի զբանները: Մտածելով Ուրուականի ասածների վրայ՝ այժմ էլ նա նոյնն էր արել, սակայն չամարձակելով աչքերը վեր բարձրացրել կամ վեր կենալ չոքած տեղից:

— «Երեկի այդ հարցում շատ ես դանդաղ շարժուել, Յակոր», նկատեց Սկսուածը մտամոլոր, թէպէտ և խոնարհութեամբ ու յարգանքով:

— «Դանդաղ», պատասխանեց Ուրուականը:

— «Եօթը տարի է, որ մեռել ես, մտախոհ արտասանեց Սկսուածը, «և թափառում ես շարունակ»:

— «Շարունակ», ասաց Ուրուականը: «Ո՞չ հանգիստ և ոչ անդորրութիւն: Խղճի մշտջենական խայթից»:

— «Արագ ես ման գալիս», ասաց Սկսուածը:

— «Բամու թեւերով», պատասխանեց Ուրուականը:

— «Եօթը տարում երեկի շատ երկրներ ես ոտի տակ տուել», ասաց Սկսուածը:

Այս իսուբերը լսելով՝ Ուրուականը մէկ էլ աղաղակ բարձրացրեց և գիշերուայ մեռելային լուռթեան մէջ մի այնպիսի հրէշաւոր ձայն հանեց իր շղթայով, որ գիշերուայ պահապանին մեղադրելու չէր, եթէ թաղի հանգստութիւնը այդպէս խանգարողին դատի ենթարկէր:

— «Օ՛, դու, գերուածդդ, կաշկանդուածդդ ու կրկնակի շըդթայակապդ», գրչեց Ուրուականը: «Չգիտե՞ս, որ այս աշխարհի համար երկնային էակները շատ ու շատ դարեր պիտի ջանք թափեն յաւիտենականութեան մէջ, մինչև որ տարածուի այն բարիքը, որ ընդունակ է արտադրել աշխարհը: Չգիտե՞ս, որ ամենսի քրիստոնեայ սիրով գործելով իր փոքրիկ շըջանում, ինչ և լինի այդ շըջանը, իր մահկանացու կեանքը պիտի շատ կարճ համարի՝ համեմատած այն ընդարձակ միջոցների հետ, որ նա ունի իր ձեռքի տակը, ուրիշներին օգտակար լինելու համար: Չգիտե՞ս, որ ապագայում զղջալով չես կարող ուղղել կեանքիդ սխաները, երբ յարմար դէպքից չես օգտուել ժամանակին մերձաւորիդ օգտակար լինելու նպատակով: Եւ այդպիսի մէկն եմ եղել ես, ծն, այդպիսին էի ես»:

— «Դու միշտ լաւ, գործի մարդ ես եղել, Յակոր», կակագեց Սկսուածը, որ այժմ սկսում էր այդ բոլորը իր վրայ առնել:

— «Դործ», աղաղակեց Ուրուականը՝ կրկին ձեռները կոչուամբեր, 1904.

տըրտելով: «Մարդասիրութիւնն էր իմ գործը. ողորմութիւնը, ներողամտութիւնը և բարեգործութիւնն էին իմ անելիք գործը: Առևտուրս միայն մի կաթիլ ջուր էր իմ գործիս անսահման ովկիանոսում»: Ուրուականը ձեռքի երկարութեամբ շղթան բարձրացրեց, կարծես թէ այդ էր իր անձկութեան պատճառը, և կրկին դանութեամբ գլուխին շպտեց:

—«Ճարուայ այս օրերին», ասաց Ուրուականը, «տանջանքներս սաստկանում են: Ի՞նչու էի թափառում ինձ նման էակների բազմութեամ մէջ միշտ գլխակոր և երբէք չէի բարձրացնում աշքերս՝ նայելու այն օրնեալ Աստղին, որ Մոգերին առաջնորդեց դէպի աղքամոիկ Այրը: Միթէ պակաս էին աղքատ մարդիկ, որ նրա լոյսը ինձ էլնրանց մօտ առաջնորդ էր»:

Սկզուջը անչափ տրոտմեց՝ լսելով Ուրուականի այս խօսքերը և սկսեց սաստիկ գողալ:

—«Լսիր ինձ, գոչեց Ուրուականը: «Ժամս մօտենում է»:

—«Լսում եմ, ասաց Սկզուջը: «Բայց ինայիր ինձ, Յակիր, ինսդրում եմ. պերճախօսութիւն մի անիր»:

—«Ի՞նչպէս է, որ այժմ մի այնպիսի ձեւ եմ ընդունել ես, որ դու ինձ տեսնում ես,—չեմ կարող ասել: Շատ ու շատ օրեր աներեսոյթեաբար նստել եմ կողքիդր»:

Շատ էլ դուրեկան նորութիւն չէր այդ Սկզուջի համար: Նա գողալով սրբեց ճակատի քրտինքը:

—«Ապաշխարանքիս թեթև մասը չէր այդ», շարունակեց Ուրուականը: «Այս գիշեր ես եկել եմ քեզ նախազգուշացնելու, որ դեռ հնարաւորութիւնն և յոյս կայ քեզ համար խուսափելու իմ վիճակիցս: Մի հնարաւորութիւնն և յոյս, որ ես եմ տալիս քեզ, էրենեղար»:

—«Դու միշտ լաւ ընկեր ես եղել ինձ համար», ասաց Սկզուջը: «Ծնորհակալ եմ»:

—«Երեք Ոգի պիտի այցելեն քեզ», շարունակեց Ուրուականը:

Սկզուջի դէմքը այնպէս ձգուեց, ինչպէս երբեմն Ուրուականին էր ձգուել:

—«Այդ է քո յիշած հնարաւորութիւնն ու յոյսը, Յակոր», հարցրեց նա գողգոջուն ձայնով:

—«Այդ է»:

—«Ծնոր.... շնորհակալ եմ, հարկաւոր չէ ինձ», ասաց Սկզուջը:

—«Առանց նրանց այցելութեան», ասաց Սկզուջը, «դու մի յուսար իմ վիճակիցս խոյս տալ: Առաջնին սպասիր վաղը, երբ ժամացոյցի զանգը «մէկը» կը խփի»:

— «Զէ կարելի, որ բոլորին միանգամից ընդունեմ ու պլծնեմ, Յակոր», ակնարկեց Սկոռչը:

— «Երկրորդին սպասիր նոյն ժամին միւս գիշեր: Երրորդին՝ յաջորդ գիշեր, երբ տասներկուակի վերջին հարուածի ձայնը կ'անհետանայ: Մի սպասիր ինձ մէկ էլ տեսնել և քո սեփական օգտիդ համար աշխատիր չմոռանալ մեր մէջ անցածը»:

Այս խօսքերից յետոյ ուրուականը սեղանի վրայից վերցըրեց իր փաթաթանը և կապեց գլուխը առաջուայ պէս: Սկսուչն այդ իմացաւ նրա ատամների ընդհարման անախորժ ձայնից, երբ փաթաթանը իրար խփեց նրա ծնուները: Նա կըկին սիրտ արաւ աչքերը բարձրացնել, գերբնական այցելուն շղթայակապ կանգնած էր ուղղակի նրա դիմացը:

Ուրուականը յիտ-յետ գնալով սկսեց հեռանալ նրանից. Նրա ամեն մի քայլում պատուհանը մի քիչ բարձրանում *) էր ինքնիրան, այնպէս որ երբ Ուրուականը հասաւ պատուհանին, վերջինս բոլորովին բացուած էր: Նա նշան արաւ Սկսուջին մօտենալու, և երբ սա երկու քայլի վրայ էր, Մառլէյի Ուրուականը ձեռքը բարձրացնելով զգուշացըրեց նրան աւելի մօտ չընալ: Սկսուջը կանգնեց ոչ այնքան հնազանդութիւնից դրդուած, որքան զարսանքից ու վախից, որովհետեւ հէնց որ նա ձեռքը բարձրացրեց, որը լցուեց խաւն ու անորոշ աղմուկով, լացի ու վայի ձայներով, անսասանելի ախուր և ինքնամբաստան կոծով: Ուրուականը մի ըոպէ լոելուց յետոյ իր ձայնն էլ խաւնեց վշտակի ողբին և սուզուեց գիշերուայ սառը մթութեան մէջ:

Սկսուջը յուսակտուր հետաքրքրութիւնով մօտեցաւ պատուհանին և գուրս նայեց:

Օդը լիբն էր հեծող ուրուականներով, որ անդադրուն փութկոտութիւնով այս ու այն կողմն էին սլանում: Նըանք ամենքն էլ Մառլէյի Ուրուականի նման շղթայակապ էին, ումանք (երեւի քաղաքական յանցաւորները) կապուած էին իրար. ոչ մէկն էլ ազատ չէր Շատերն Սկսուջի անձնական ծանօթներիցն էին: Այն սպիտակ ժիշետաւոր ծերունին նրա մօտ բարեկամն է եղել, որի ոտներին մի հրէշաւոր երկաթէ մնդուկ է կապուած: Նա մի ողորմելի աղաղակ էր արձակում անկարող լինելով օքնել մի խեղճ կնող ու նրա երեխային, ու լունց նա տեսնում էր ներքենում մի շէմքի վրայ: Բոլորի գըժ-

*) Արևելքում էլ պատահանները չեն բացւում աջ ու ձախ, այլ դէպի վեր մն բարձրանում:

բախտութիւնը պարզապէս նրանումն էր, որ նրանք ցանկաւ նում էին միջամտել մարդկանց գործերին բարի նպատակով։ բայց մշտապէս կորցրել էին այդ հնարաւորութիւնը։ Արդեօք այդ էակները կորմն մշուշում, թէ մշուշը պատեց նրանց, — Սկսուջը չէր կարող ասել։ Բայց նրանց հոգեղին երգերն էլ չքացան իրանց հետ միասին, և գիշերը դարձաւ նոյնը, ինչ որ էր նրա տուն մտնելիս։

Սկսուջը պատուհանը փակեց և սկսեց քննել դուռը, որի միջով ներս էր մտել Ուրուականը։ Փականքի բանալին երկու անգամ էր շուռ տուած, որ իր արածն էր, սողնակը նոյնպէս անշարժ էր մնացել։ Նա աշխատեց ասել «Դատարկ բան», բայց հէնց առաջին վանկի վրայ դէմ ընկաւ և կրած յուզմունքից, թէ ցերեկուայ յոգնածութիւնից, թէ անտեսանելի աշխարհը զցած իր մի թեթև հայեացքից, թէ ուրուականի տաղտկալի խօսակցութիւնից, թէ ժամանակի ուշ լինելուցը՝ հանգստանալու անդիմադրելի կարիք զգալով, ուղղակի առանց շորերը հանելու պառկեց և իսկոյն քննեց։